


Julian - Day 67

Yunnan in my view

MM/8/12 1912



2011 - 05
ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՈՎԲԱԳՐԻ

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽՈՎԲԱԳՐԻ № 27

ԿՈՌԻՆԿՆ ՈՒ ԱՂԻԵՍԸ

ԸՆԿԵՐՆ ՈՒՂԻՂ ՊԵՏք Է ԼԻՆԻ

ՀԵՐԻԱՐ

Ա.թ. ԽՆԿՈՑԵԱՆ

891-995
Խ-64

Ելեկտրոն. Ն. Աղանեան



ՔԵՓԱՆ 1912

891.995
и-64

31021-61

891.995 ինքնույթ
ի-64 Կոմիջնույթ
և սպառություն


Ա 8 | 2102. 29 | ին 29
620 | 31X78

Խ 32203 20X78
Խ Հ-16243 13/5, 51



POTTER.

ԼԻՏ. Ծ. Ի. ԲԱԽՈՎԱ, ԹԻՖԼԻՍъ.



I


Աղւէսն ու Կռունկը ընկերացան:
Կռունկը բուն շինեց, ձու ածեց, թուխս նստեց, ձագ
հանեց:

Աղւէսն էլ ձագեր ունեցաւ, մէր դարձաւ:
Մի օր Կռունկը դուրս գնաց ձագերին կեր բերելու:
Տնպահ Աղւէսը բռնեց Կռունկի մի ձագը, կոլորեց,
վիզը ոլորեց, անուշ արաւ, ոսկորով կերաւ, տեղը բան
չը թողեց:

Տուն եկաւ Կռունկը և ի՞նչ տեսնի.
Աղւէսը լալիս է ու լալիս, իրան քրքրում ու լալով
ասում.

— Կռունկ քուրիկ, էպպէս էլ անբախտութիւն...
— Ի՞նչ անբախտութիւն, ի՞նչ է պատահել, Աղւէս բու-
րիկ:

— Բա չես ասի, մեր բալիկը չը կայ ու չը կայ: Էնքան
ման եկայ, Էնքան ման եկայ, ի՞նչ ու չը կայ:



—Ո՞ւմ բալիկը.

—Մեր բալիկը, Էլի.

—Այս ո՞ր բալիկը.

—Նա, նա,

աչքս կուրանայ՝

փափկամազիկ,

երկար-վզիկ,

երկար-ոտիկ,

երկար-տոտիկ,

բարձրիկ, մարձրիկ...

ձէնը բաղցրիկ...

հօրօտ-մօրօտ բալիկը...


Գովում էր Աղւէսը, իրան քրքրում, մին խփում, հա-
ղար թափում:

—Աղւէս քուրիկ, ասում է Կոռունկը.

—Դու ձագի տէր ես,

դու սիրող մէր ես,

արցունք մի թափի,



արցունք մի չափի:
դա էլ չար բախտից,
Դա էլ իմ բախտից:
—Հա, հա, հեկեկում էր Աղւէսը, հա, Կռունկ քուրիկ, հա,
անուշ քուրիկ, լացը չի օգնի, անցածն անցած է:

II

Երկրորդ օրը Կռունկն էլի գնում է ձագին կեր բերելու:
Տնպահ Աղւէսն էլի բռնում է Կռունկի միւս ձագին, կո-
լում, վիզը ոլորում, ու անուշ անում, ոսկոռով ուտում,
տեղը բան չի թողնում:


Տուն է գալիս Կռունկը և ինչ է տեսնում:
Աղւէսը երեկւանից աւելի դառը լալիս է, մին խփում,
հազար թափում, իրան քրքրում ու լալով ասում.

—Ա՛խ, Կռունկ քուրիկ,
քուրիկ ու մէրիկ,
իմ աչքը դուրս գայ,
աշխարհը փուլ գայ.
փուլ գայ իր հիմքով,

լիքն է չարիքով:
Փափկամազիկ,
երկար-վզիկ,
երկար-ոտիկ,
երկար-տոտիկ,
բարձրիկ, մարձրէկ...
ձէնը քաղցրէկ...
հօրօտ-մօրօտ բալիկն էլ չըկայ.
Կռունկն էս անգամ հասկանում է, որ ձագերին ուտողը
քուրիկ Աղւէսն է, բայց իրան չըհասկացողի տեղ է դնում
ու ասում.

—Աղւէս քուրիկ,
քուրիկ, մէրիկ,
դու ձագի տէր ես,
դու սիրող մէր ես,
կաթդ կը ցամքի,
կուրծքդ կը սմբի,
արցունք մի թափի,

7



արցունք մի չափի:

Դա էլ չար բախտից,

դա էլ իմ բախտից:

—Դու ճիշտ ես ասում, այ կոռւնկը բուրիկ, չար բախտի
ձեռքից հւմ գնանք գանգատ, հեկեկում էր Աղւէսը ու քթի
տակ ծիծաղում կոռւնկի վրա:

III

—Աղւէս քուրիկ, մի օր էլ ասում է կոռւնկը, էն է իմ
ձագերը կորան, տանողի աչքը դուրս գայ, քո ձագերն էլ
մեծացան, դէհ, էն է, իրանց զլիին կապրեն: Արի գնանք,
ձեռք ձեռքի տանք, բըռջնման ման գանք, սրտերս բանանք:


—Է, ուր գնանք, կոռւնկ բուրիկ, անուշ բուրիկ:

—Այ, հէնց կուզես երկինք թոշենք, տեսնենք՝ վերևն
ինչ կայ:

—Ի՞նչ ես ասում, քուրիկ, ծիծաղեց Աղւէսը, ի՞նչպէս
կարող եմ քեզ հետ թոշել, ես թև չունեմ, քեզ պէս բախ-
տաւոր չեմ:

—Է, ի՞նչ անենք որ չունես. ես հօ ունեմ: Էլ ի՞նչ քոյ-






ըեր ենք, որ իրար չօգնենք: Նստիր ինձ վրա, միասին
թռչենք:

Աղւէսը ինքն իրան մտածում է. «Ես ինչ լաւ եղաւ. կը
գնամ երկինք, պատահած թռչունը կը խեղդեմ, վէր կա-
ծեմ գետին. ետ գալիս էլ քուրիկիս ափ ու խուփ կանեմ,
հօր, սրանից լաւ բան:

Աղւէսն նստում է կռունկի վրա:

Կռունկը թափահարում է թեերը, վեր բարձրանում,
գնում է ու գնում, հասնում է երկնքի եօթը յարկը ու
յանկարծ շուռ է գալիս օդումը: Աղւէսը յանկարծ մէջքի
վրա դրը-խկ, ընկնում է գետին և իրան ջարդում:

—Աղւէս քուրիկ, ցած գալով ասում է կռունկը, էտ էլ
քո բախտից, էտ էլ քո բախտից:



ԸՆԿԵՐՆ ՈՒՂԻՊ ՊԵՏՔ Է ԼԻՔ

Օձն ու Աղլէսը ընկերացան:
Օձն ասում է Աղլէսին.
—Դու իմ ազիզ ախպէրն ես:
Աղլէսն ասում է Օձին.
—Դու իմ անուշ քուրիկն ես:



Մի օր էլ պատահեց որ Օձն ու Աղւէսը գետից պէտք է
անցնէին:

—Ախպէր ջան, ասում է Օձը, գլխովդ պտոյտ գամ. ես
ջրից սաստիկ վախում եմ. թող վզովդ փաթաթւեմ, ինձ
գետից անցկացրու:


—Շատ լաւ, քուրիկ ջան, պատասխանում է Աղւէսը,
էլ որ օրւայ համար եմ, որ անուշ քուրիկիս չօգնեմ. Սրի
փաթաթւի:

Օձն օղակ-օղակ փաթաթւեց Աղւէսի վզովն և երկուսով
մտան գետը. Գետումը Օձն սկսեց սեղմել Աղւէսի բուկը :


—Ի՞նչ ես անում, անուշ քուրիկ, ասաւ Աղւէսը, ի՞նչ ես
անում. չ՞ որ խեղդեցիր...

—Իմ ուզածն էլ հէնց էտ է...

—Անուշ քուրիկ, շատ սիրելուցդ է, որ էտպէս ես ա-
նում. ես էլ էս օրւան էի սպասում, որ անուշ քուրիկիս
գրկումը հոգիս տամ: Բարի քուրիկս, մեկնի քո էտ ճկուն,



ԲՏԵՐԸ



ատլաս վզիկը, վերջին անգամ նայեմ քո վառվուն, թա-
ւիչ-թովիչ աշքերիդ, կարօտս առնեմ ու նոր մեռնեմ...

Օձը վիզը մեկնեց:

Աղւէսը, հափ, բկից բռնեց ու պինդ սեղմեց: Սեղմեց
ու խեղդեց: Խեղդեց ու դուրս եկաւ ափը: Դուրս եկաւ ա-
փը, մեկնեց օձը գետնին ու ասաւ.

—Ա՛յ, էսպէս ուղիղ պէտք է լինի ընկերը:



9836